ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՄԱՆՖՐԵԴ ՌԻԽԹԵՐԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ

ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ ՄԱՆՖՐԷԴ ՌԻԽԹԷՐԻՆ

(REV. MANFRED RICHTER)

ՈՐ Ի ՊԵՐԼԻՆ, Ի ԳԵՐՄԱՆԻԱ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Գերմանիոյ Հայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Պէքճեանէն Ձեր խոր սիրոյն և նուիրուածութեան հանդէպ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյս և հայ ժողովուրդին՝ ի Գերմանիա և ի Հայաստան:

Մենք ևս անձամբ Ձեզ ճանչնալով քաջատեղեակ ենք այն աշխատանքներուն և ծառայութիւններուն զորս Դուք կատարեցիք և կը շարունակէք կատարել - Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և Գերմանիոյ հայութեան միշտ ջատագով հանդիսանալով հայ ժողովուրդի արդար իրաւունքներուն: Դուք հիացողներից մէկը եղաք հայ ժողովուրդի աւելի քան 1700-ամեայ քրիստոնէական վկայութեան, զոր ան մատոյց հաւատարմօրէն և ստեղծագործականօրէն նոյնիսկ ի գին մարտիրոսութեան:

Ի գնահատութիւն Ձեր բազում տարիներու այս հայանպաստ և անձնուէր ծառայութիւններուն՝ այսու Հայրապետական Կոնդակս Ձեզի կը շնորհենք Հայց. Եկեղեցւոյ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ շքանշանը:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգևէ քաջառողջ և երկար կեանք ի ծառայութիւն մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի և անոր հաւատարիմ գերմանացի և հայ ժողովուրդներուն: Թող Աստուած Ձեզ զօրացնէ որպէսզի աւելի մղում տաք հայ-գերմանական յարաբերութիւններու սերտացման և յառաջացման:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 3 Սեպտեմբերի
Յամի Տեառն 1998 և ի թուին Հայոց ՌՆԽԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/198